

143

Հ. Ս. Խ. Հ.

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԱՆԴՐԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ա. ՎԻՆՈԿՈՒՐՈՎ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Թարգմանեց՝ Կ. Հ.



ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Տպագրական Տրեռի Ս.Ուշին Տպարան

ՅԵՐԵՎԱՆ—1923

177

Հ. Ս. Խ. Հ.

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԱՆԴՐԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

368.4 (47)

Ա. ՎԻՆՈԿՈՒՐՈՎ

300


1628-46



ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ Կ. Հ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՆ ԲԱԺԻՆ

Տպագրական Տրեսի Առաջին Տպարան

ՅԵՐԵՎԱՆ—1928



177-492

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(1912 ԹՎԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՎՅԵՄԵՐԵՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ)

1. 1912 թ. վերջից մինչև իմպերիալիստական պա-
սերազմի սկիզբը

1913 թվի հունվարի 3-ին ընկ. Զինովյեվը «Правда»-ում
գրել է. «Եթե 1911 թիվը ուսուսական բանվորական շարժման հա-
մար յեղել է բեկման տարի, ապա 1913 թիվն արդեն յեղել է
նրա անշեղ վերելքի տարին: Վերածնվող պրոլետարական շարժ-
ման առաջին ծիծեռնակները յեղել են 1910 թվի ամառային
տնտեսական գործադուլները: 1912 թ. բանվորական շարժումը
ինքնադաշտադանութունից անցնում է հարձակման:

Այդ վերելքի որերին էր, վոր ցարական կառավարության
սկսական արխիվներից դուրս բերին բանվորների ապահովագ-
րության նախագծերը, վորտնք 1905—1906 թ. թ. մոռացված ելին,
և հրամայեցին բանվոր դատակորգին, վորպես 1912 թ. հունիսի
23-ի որենքներ՝ դժբաղո պատահարներից և հիվանդություննե-
րից ապահովագրելու մասին:

Այդ որենքները, վոր անցել էին սև հարյուրակային—ոկ-
տյաբրիտական Դումայում, ինքնին հասկանալի է, վոր քիչ
էին նման բանվորների օսցիալական ապահովագրության և չե-
ին բավարարում բանվորական ապահովագրության նվազագույն
պահանջներին: Բանվորական ապահովագրությունը տարած-
վում էր խոշոր արդյունաբերության մեջ աշխատող սակավա-
թիվ (20 տոկոս) բանվորների վրա, և յերկու տեսակի ապահո-
վագրություն էր սահմանվում՝ հիվանդություններից և հաշման-
դամությունից: Ապահովագրությունը չէր տարածվում մշտական
հաշմանդամության, ծերության և գործազրկության դեպքերի
վրա, ապահովագրական տուրքերի (տոկոսների, մուծանքների)
մեծ մասը դրվում էր բանվորների վրա, սահմանվում էին նը-
պատներ և կենսաթոշակներ՝ աննշան չափերով, բանվորների

ինքնավարութիւնը ապահովագրութեան գործում հասցնում էլին նվազագույնի:

Սակայն, չնայած վերոհիշյալ թերութիւններին, 1912 թ. ապահովագրական որենքներում հայտ չեկավ վորոշ յերկվութուն: Զգալիով սահմանափակել բանվորների իրավունքները մինչ նվազագույն աստիճան, այդ որենքները, միաժամանակ հնարավորութիւն էին տալիս ընդլայնելու այդ իրավունքները: Այսպես, ձեռնարկատերերին վերապահելով իրավունք նշանակելու եր լիտիորներին՝ հիվանդանոցային գանձարկղների ընդհանուր ժողովներին և վարչութեանը մասնակցելու համար, այդ որենքները հնարավորութիւն էլին տալիս ձեռնարկատերերին (գործարանատերերին) նաև հրաժարելու այդ իրավունքներից և չընշանակել ներկայացուցիչներ և այդպիսով հնարավորութիւն էլին տալիս բանվորներին պայքար մղել՝ հիվանդոցային գանձարկղներից հեռացնելու գործարանատերերին, և բանվորների լիակատար ինքնավարութիւն հաստատելու համար: Նմանապես, սահմանելով, վորպես կանոն, մանր տիպի գործարանային գանձարկղ, վորը պետք է լինել ձեռնարկատիրով մշտական հսկողութեան տակ, 1912 թ., որենքը հնարավորութիւն էր տալիս մանր գործարանային գանձարկղներին միանալու և կազմելու ընդհանուր գանձարկղներ և պայքարելու հանուն համաքաղաքային և շրջանային խոշոր գանձարկղների կազմակերպման, և այդպիսով՝ բանվորական շարժումը ավելի մեծ թափ էր ստանում և ամբաղնդվում հետագա նվաճումների համար:

Նույնը և բժշկական ոգնութեան գործում: Բժշկական ոգնութիւնը առաջվա պես թողնելով տերերի ձեռքին, 1912 թ. որենքը բանվորներին իրավունք էր տալիս, ձեռնարկատերերի համաձայնութեամբ, բժշկական ոգնութեան գործը հանձնել հիվանդանոցային գանձարկղի իրավասութեանը և այդպիսով յենթարկել այն՝ բանվորների ազգեցութիւնը:

Բանվոր դասակարգի առաջնագահը և նրա ներկայացուցիչները միանգամայն ըմբռնեցին այդ որենքների հսկայական կարևորութիւնը վոչ այնքան բանվորների սոցիալական ազատութեան համար, վորքան բանվորական գանդվածները կազմակերպելու և զիրքերն ամբաղնդելու համար՝ հետագայ, վաղ միայն ապահովագրական, այլ և ընդհանուր բանվորական նվաճումների նպատակով:

Մյուս կողմից, ձեռնարկատերերի տոռաշապահը, հանձնադրածարանատերերի զանազան ընկերությունների, նմանապես լավ ըմբռնեց ապահովագրական որենքների ամբողջ կարևորությունը բանվորների ու կապիտալիստների մեջ և յեղած դասակարգային պայքարը խորացնելու տեսակետից և ամեն ջանք դրած զրավ՝ թուլացնելու 1912 թ. որենքի այն կողմերը, վորոնք տերերի համար անհաճու և ֆնասակար էին:

Նման պայմաններում 1912 թ. վերջերին սկսվեց ապահովագրական կամպանիա (պայքար, ագիտացիա, քարոզ), վորը հետզհետե ընդլայնվում, զարգանում էր և զնդդրվում բանվորական ավելի լայն զանգվածներ, և վերջի վերջո հասցրեց բանվորական ապահովագրական յոգունքների լիտկատար հաղթանակին:

Կապիտալիստների դասակարգը ասպարեզ դուրս յեկավ ավելի կազմակերպված, քան առաջ:

Ապահովագրական որենքների նախնական քննության և բազմիցս կատարված փոփոխումների ժամանակ դեռ՝ արդյունաբերողները տեխնիկ մասնակցություն էին ունեցել: Ավելի յեռանդուն և ազատ աշխատանք սկսվեց ձեռնարկատերերի կազմակերպություններում այն ժամանակ, յերբ Պետական Դումայում և Պետական Խորհրդում անցան ապահովագրական որենքները: Ծայր առան բազմապիսի համազուգարներ և խորհրդակցություններ, վորոնց հանդեպ ցարական կառավարությունը վոչ միայն խոչնդոտներ չէր հարուցանում, այլև ամենայն աջակցություն էր ցույց տալիս: Առևտրի և արդյունաբերության ներկայացուցիչների «համապաշտպանների խորհրդին» առընթեր կազմվեց ապահովագրական հատուկ կոմիտե, վորին ցարական կառավարությունը նույնիսկ դրամական ոժանդակություն էր ցույց տալիս: Յեռանդուն դործունեություն հայտ բերեց նաև Պետերբուրգի «գործարանատերերի և ֆաբրիկանտների ընկերությունը», վորը ապահովագրական հարցերին նվիրեց մոտ քառասուն նիստ:

Լայն ասպարեզ բանալով արդյունաբերողների և նրանց կազմակերպությունների համար, բանվորներին ցանկանում էին ազատել ապահովագրության հետ կապված «հոգատարությունից», իրավունք տալով նրանց միայն ապահովագրական մուծանքներ վճարել:

Այդ դատճառով ձեռնարկատերերը ձգտում էին թուլացնել և անփնտ զարձնել ապահովագրության ամենավատնագավոր կողմը, այն և՛ բանվորների կազմակերպման հնարավորությունը:

Այլ բանն արտահայտվեց արդեն 1912 թ. սեպտեմբերին, յերբ արհեստակցական միությունները ներկայացուցիչները պահանջումն մոտենեցել գործարանային տեսուչների համագումարին, ուր պետք է քննության առնվեր հիմնականացային գանձարկղի կանոնադրությունը և ուր պետք է մասնակցություն ունենային արդյունաբերողների ներկայացուցիչները: Բանվորների ներկայացուցիչներին պատասխանեցին խիստ մերժումով, պատճառաբանելով, վոր բանվորների մասնակցությունը «կը խանգարի» համագումարի աշխատանքների խաղաղ ընթացքը և հետո, վոր բանվորները, վորպէս թե, չունեն կենտրոնական կազմակերպություններ:

Այլիւ մեծ ճնշումների յենթարկվեցին բանվորները, յերբ պահանջումն դասախոսություններ ու ժողովներ կազմակերպել ապահովագրական որենքներին ծանոթանալու նպատակով:

Պետերբուրգի բանվորները ստիպված յեղան ուժեղ պայքար սկսել ժողովների արգելման դեմ: Որինակ, «Անտրնդպուդ» գործարանում քարոքապետը պահանջել էր, վոր գեկուլցողը լինի կամ այդ գործարանի բանվորներից, կամ գործարանային տեսուչը: Ֆրանկ-ուսուական գործարանում յերկու անգամ արգելիւ էր ժողով գումարել:

Այլիւ տիտուր վախճան ունեցավ ջուլետների միության ժողովը 1912 թ. դեկտեմբերի 2-ին: Ժողով էլին յեկել մոտ հազար մարդ՝ միության անդամներ և գրեթե նույնքան ձիավոր և հետևակ վոստիկանություն: Ժողովականների մեծամասնությունը, չունենալով անդամագրույթներ, վոստիկանության արգելմամբ չկարողացավ ներկա լինել ժողովին, և ժողովը այդ պիտով չկայացավ:

Ինպի ապահովագրական ժողովները յեղած նման վերաբերմունքը առաջ բերեց բանվորների կողմից խիստ բողոք և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան հարցապնդում արավ այդ առթիվ Պետական Դումայում: Նույն որը Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի հարցապնդումը պաշտպանվեց Պետերբուրգի բանվորների կողմից միորոյա դորձադուլով:

Բանվորները տարան հաղթանակը: Ապահովագրական ժողովների ազատության համար մղված պայքարը պատվեց ակներև հաջողությամբ: Բարձր «շրջաններում» վորոշվեց այլևս խոչնդոտներ չը հարուցանել բանվորների առաջ, ապահովագրական հարցերի շուրջը ժողովներ և դասախոսություններ կազմակերպելու համար:

Վորպես ծիծաղաշարժ մի փաստ, արժե հիշատակել այն, վոր «կառավարական» ապահովագրական մասնագետ Լիտվինով — Ֆալինսկին, վորպես դասախոսների, առաջարկում էր մինիստրական չինովնիկներին: Նույնիսկ գործարանատերերը հակառակեցին այդ բանին, հասկանալով, վոր դա գրգռում առաջ կը բերի բանվորների մեջ: Յեւ վորոշվում է դասախոսների ընտրութեան հարցը թողնել «գործարանատերերի ընկերութեան» հայեցողութեանը:

Նույնպիսի պարտութիւն կրեցին ցարական կառավարութիւնն ու արդյունաբերողները, յերբ Ապահովագրական Պորհրում և ապահովագրական առյայններում հրապարակ յեկավ «նշանակովիները» խնդիրը:

Ըստ որենքի, Ապահովագրական Պորհրում բանվորները կազմում էին անդամների մեկ հինգերորդից պակաս, իսկ ապահովագրական առյայններում, մեկ յոթներորդ մասից պակաս: Ուրեմն՝ ել ինչից վախենալ: Մեծամասնութիւնն ապահովված էր տերերի և կառավարութեան համար: Բայց հենց այդպես չէր: Սկսեցին վորոշել բանվորների շարքերում ավելի անփաստ ներկայացուցիչներ: Ուրիշ, Ուդեսայում հրավիրեցին սե հարյուրակային բանվորի: Ուրիշ տեղերում հրավիրում էին կիսապիտակից, անդրադեռ բանվորների: Պետերբուրգում գործն ավելի բարդ ու վտանգավոր բնույթ առաջավ: Սկզբում ցանկանում էին Պետական Դումայի բանվորական խմբակի պատգամավորներին հրավիրել, բայց... հրանք ել սոցիալ-դեմոկրատներ գուրո յեկան: Յեւ ահա կանգ առան Պետական Դուման ընտրող ամենաանգուշ լիազորների վրա:

Սակայն, դա ուժեղ բողոքներ առաջացրեց բանվորների կողմից: «Նշանակովիները» բանվորների ճնշման տակ մեկը մյուսի հետեից սկսեցին հրաժարվել բանվորների «ներկայացուցիչներ» լինելու պատվից և գործն ել այդպիսով զուլս չեկավ:

Այդ նախնական առաջավոր բնդհարումներից հետո, յերբ պարզվեց, վոր յեթե բանվորները դեռ լավ կազմակերպված չեն, բայց, անկասկած, ունեն դասակարգային շահերի բմբնողութիւն, թշնամական վերաբերմունք դեպի տերերի ձեռնածութիւնները, իսկ ամենագլխավորը՝ համերաշխութիւն — վրա հասավ ապահովագրական կամպանիայի ամենամեծ շրջանը, այն և՛ հիմնադրանոցային զանձարկղի կանոնադրութիւնը քննող լիազորների ընտրութիւնները:

Այդ շրջանն ավելի ցայտուն յերևան հանեց բանվորների և տերերի շահերի ներհակութունը և ուժեղ խթան հանդիսացավ բանվորների կազմակերպման և միաբանման համար, չնայած ձեռնարկատերերի և ցարական բուրժուա—կալվաժատիրական կառավարութեան բոլոր ջանքերին, Յարական կառավարութեան և արդյունաբերողների (գործադանատերերի) հաշվով՝ հիվանդանոցային գանձարկները պետք է խաղաղացնէին ուսական բանվորների «անհանդուսութունը»:

Առևարի և արդյունաբերութեան մինիստրութունը սքանչելի ծրագիր մշակեց, այն է՝ նախ և առաջ բանալ մի քանի որինակելի գանձարկներ Պետերբուրգում, վորոնք որինակ կըդառնային ուրիշ գանձարկների բացման համար: Իսկ մի քանի տասից հետո, և համենայն դեպս վոշ ուշ, քան 1913 թ. ամառը—կսկսեն գործել բոլոր հիվանդանոցային գանձարկները: Տերերը և չինովնիկները հույս ունէին, վոր բանվորները լռելայն կհամաձայնեն լիազորներ ընտրել, առանց նախնական ընտրական ժողովների, առանց ապահովագրական խնդիրների և գանձարկի կանոնադրութեան քննութեան: Ապահովագրական ասոյանները հրահանգ մշակեցին ընտրութեանների համար, ընտրութեաններ, վորոնք բանվորական շրջաններում ստացան «խուլ», «կուլք» և «արտգընթաց» անունը: Բանվորները բաժանվում էին մի քանի կարգի, մի հանգամանք, վոր նպատում էր բանվորների թուլացմանն ու ցրվածութեանը և աշխատով նվազում էր ապահովագրական շարժման թափը: Նախընտրական ժողովներ բնավ չէր նախատեսվում: Վոշ մի նախապարտադատական աշխատանք չէր կատարվում՝ ընտրութեանների նպատակը պարզաբանելու և լիազորների թեկնածուներ նշանակելու համար: Ընտրութեանների բոլոր ձեռնարկութեանները կայանում էին նրանում, վոր ընտրական թիրխիկներ էին գրում և ձգում արկղը: Բայց տերերը ծրագրում էին, բանվորները քանդում... Բանվորները միանգամից հենց ընդդիմացան աշգորինակ ապահովագրութեան: Պահանջ գրվեց, վոր բանվորները իրավունք ունենան ազատ ապահովագրական կամպանիա վարելու: Նախագիծեցին հիվանդանոցային գանձարկների բանվորական կանոնադրութեան հիմունքները, վորոնք համապատասխանում էին բանվորական ապահովագրական պահանջներին, այն է՝ ապահովագրութեան տարածումը բոլոր բանվորների վրա, սոցիալական ապահովագրութեան բոլոր տեսակները, աշխատունակութեանը կորսնելու դեպքում աշխատա-

վարձի լրիվ հատուցում, ապահովագրութիւնն ի հաշիվ ձեռնարկատերերի, վերջիններիս լիակատար չեզոքացումը ապահովագրական գործի վարելու ասպարեզից և ուղղումներ «տերերի» կանոնադրութեան մեջ:

Հիվանդանոցային գանձարկւնների բացումը, վոր կոչված էր «խաղաղացնելու» բանվորներին, նոր ազդակ հանդիսացավ բանվորական շարժման համար: Կազմակերպվեցին բազմաթիվ ապահովագրական խմբակներ, ապահովագրական հանձնաժողովներ, ծայր առան ապահովագրական ժողովները:

Արդեն 1913 թ. հունվարի 20-ին Պետերբուրգի 7 ձեռնարկութեանների լիազորները կազմեցին լիազորների հանձնաժողով, վորին հանձնարարվեց մշակել ընդհանուր գանձարկւնների կազմակերպման հարցը, միացնել առանձին գործարանների լիազորների աշխատանքը, միջոցներ ձեռք առնել պետութելու համապատասխան բանվորական ապահովագրական համագումար, կազմակերպել համագործարանային ժողովներ, դասախոսութեաններ ձեռնարկութեաններում և այլն:

Առանձին թափ ստացավ ապահովագրական կամպանիան վարչապալում, վորտեղ միանգամից բոլոր բանվորները մասնակից դարձան բանվորական շարժման և միանգամից ել ձեռնամուխ յեղան հիվանդանոցային գանձարկւնների կազմակերպմանը: Նրանք արագութեամբ կազմակերպվեցին, ապահովագրական հանձնաժողով կազմեցին և գործարանատերերի ընկերութեանը առաջադրեցին բանվորական ապահովագրական պահանջներ: Բանվորների ու տերերի շահերի «հաշտեցման» փոխարեն առողջ յեկավ դասակարգային սուր սրայքար:

Տեսնելով այդ իրենց համար անսպասելի արդյունքները, չինովները ու տերերը վորոշեցին փոխել հիվանդանոցային գանձարկւններ բացելու յեղանակը: Նախկին փութկոտութեանը հաջորդեցին ձգձգումներ հիվանդանոցային գանձարկւնների բացման գործում: Միևնուրեքութեանը շրջաբերականով առաջարկեց համապատասխան մարմիններին, գանձարկւններ բանալիս, գործադրել «իմաստուն աստիճանականութեան», վորպեսզի հնաբավոր լինի խուսափել բանվորական հոծ մասսաների մասնակցութեանից:

Առաջին հերթին հիվանդանոցային գանձարկւններ կազմակերպվեցին այն շրջաններում, վորտեղ բանվորութեանն ավելի հետաճնաց էր, սրինակ՝ Կիևի շրջանում: Արդյունաբերական կենտրոններում հիվանդանոցային գանձարկւններ կազմակերպվե-

ցին նաև այն ձեռնարկութիւններում և արդյունաբերութեան ձյուղերում, փորակող բանփորները քիչ էլին դիտակից և միանգամայն հնազանդ՝ իրենց տերերին։ Իսկ մետաղագործները թողնելով իրեն վերջին հերթին։ Մոսկովայի շրջանում առաջին հերթին՝ գանձարկղներ կազմակերպելիցին գործարանային ձեռնարկութիւններում, Պետերբուրգում սահմանված էր այսպիսի կարգ. 1913 թ. հուլիսի 1-ին՝ ատաղձագործները, հուլիսի 15-ին՝ ջուհակները, ոգոստոսի 1-ին՝ կենդանական մթերքներ արտադրող բանփորները, և վերջապես, հոկտեմբերի 1-ին՝ մետաղագործները։

Այդ սահմանի նպատակը պարզ էր. մասնատել և թուլացնել բանփորական ապահովագրական կամպանիան և տեղիք ձեռնարկատերերի համար հլու և հնազանդ հիվանդանոցային գանձարկղները։

Ասկայն այդ բոլորը նպատակի չէր հասցնում։ Արդեն 1913 թ. նոյեմբերին Պետերբուրգում կազմվեց ապահովագրական կենտրոն Պետերբուրգի 58 գործարաններից ու Փարբիկաներից, վորը նույն Պետերբուրգի «գործարանատերերի ընկ.—յանը» գրած բաց նամակում բանփորական ապահովագրական պահանջներ առաջադրեց. մասնավորապես, համաքաղաքային հիվանդանոցային գանձարկղ հիմնելու պահանջը և միաժամանակ ընկերութեան հետ բանակցելու համար բանփորական ապահովագրական հանձնաժողով նշանակեց։ Այսպիսով և Պետերբուրգում, ինչպես և Վարշավայում ցարական կառավարութիւնը և տերերը յերես առ յերես կանգնեցին կազմակերպված բանփորութեան առաջ։

Չնայած այն բոլոր խորամանկութիւններին, վոր գործադրեցին մինիստրութիւնը, արդյունաբերողները և նրանց սիրաշահող ապահովագրական առյանները, բանփորներն ոգոստոսիցին ապահովագրական սրենքները իրենց դատակարգային շահերի համար։ Գործարաններում, մեծ մասամբ, թե Պետերբուրգում և թե գտնուեցում լիազորների ընտրութիւններին՝ գանց էին տանվում «համը» և «կույր» ընտրութիւնների կանոնները։ Տեղի էին ունենում ապահովագրական ժողովներ, նշանակվում էին թեկնածուներ, լիազոր էին ընտրվում առաջավորբանփորները։ Համարյա ամեն տեղ բանփորները հակառակ տերերի կանոնադրութեան, հրապարակ էլին բերում իրենց բանփորական կանոնադրութիւնը, իրենց ուղղումները։ Ամեն տեղ պաշտպանում էլին բանփորների լիակատար ինքնավարութիւնը հիվանդանոցային գանձարկղներում, բժշկական ոգնութեան հանձնումը բանփորների

ձեռքը, բնդհանուր հիվանդանոցային գանձարկյունների կազմակերպման հարցը կային։ Բանվորների ուղղումները, մեծ մասամբ, չէին իրագործվում, վերոլինեա կամ չէին բնութենվում տեղերի կողմից, կամ մերժվում էին գործարանային տեսուչների և ապահովագրական առնչումների կողմից։ Բայց կանոնադրութեան համար մղված պայքարը գաղափարակազմական մեծ ազդեցութեամբ ունեցավ բանվորական մասսայի վրա, տարածելով վերջինին շարքերում բանվորական ապահովագրական յոգունքներ և արթնացնելով նրա մեջ այդ յոգունքներն իրագործելու անհրաժեշտութեան գիտակցութեամբ։ Ի հարկէ, այդ պայքարը տեղի եր ունենում շատ ծանր պայմաններում։ Բանվորութեանը շատ թանկ եր նստում այդ ամենը։ Հիվանդանոցային գանձարկյունների լիազորների դեմ սկսվեց այդ ժամանակ վտտիկանական լրատուական արշավանք, տեղի ունեցան բազմաթիվ ձերբակալութեաններ և քրտորներ և այդ առթիվ Պետական Օրումայի սոց.— դեմ, Ֆրակցիան հարցապնդում արավ ներքին գործոց մինիստրին։ Հարցապնդման մեջ մատնանշվում եր, վոր վերջին ժամանակները հաճախակի են դարձել, և ուղղակի համաճարակային բնութե կնստացել «չեղոքացումները» տեղերի և վարչութեան համար անհաճո լիազորների և այլ իրավասու բանվորների ձերբակալման միջոցով։ Երշատակվում էին աղյալներ տեղի ունեցած մի շարք ձերբակալութեանների մասին՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Թարիովում, Կոստրոմայի նահ., Իվանովովոգոնսկանկում, Վարշավայում, Լոձում և ուրիշ քաղաքներում։

Վտտիկանական հետապնդումները բոլորք էլին առաջացնում բանվորների կողմից, ըստ վերում բանը հասնում եր գործադուլների, որինակ՝ Վարշավայում, Տվերում, Պետերբուրգում, Ռատտովում՝ Դոնի վրա և այլուր։

Հետեյալ գոտեմարտը բանվոր գաղափարի և կառավարութեան ու արգյունարերողների միջև տեղի ունեցավ Ապահովագրական Խորհրդի և ապահովագրական առնչումների ընտրութեանների առթիվ։

Ինչպէս միշտ, այդ ընտրութեաններին և կառավարութեանը գործարանատերերի ցուցմունքով ձգտում եր ընտրութեանները դարձնել «համը» և «կույր» և ամեն ինչ կատարել «շատաղ կարգով»։ Ընտրութեանները նշանակված էլին 1913 թ. դեկտեմբերի 22-ին և 29-ին։ Կառավարութեան կողմից արված եր ամեն ինչ, վորպէսզի աղճատվեն այդ ընտրութեան-

ները, և անկը կացութեան մեջ դրվին: Տերերն ու նրանց նշանակալները փորձ եյին անում մասնակցելու բանվորական գանձարկոյների ներկայացուցիչներին ընտրութեան, մարտի 4-ի տըրքաճակ որենքի հիման վրա արգելում եյին ժողովներ գումարել: Պետերբուրգի բանվորների հակալական մեծամասնութեանը թույլ չտվին մասնակցելու ընտրութեաւններին, ծանուցագրեր ուղարկելով միայն այն գանձարկոյներին: Վորոնք արդեն սկսել եյին գործել, և վերջապես ձերբակալեցին լիազօրների մեծ մասին, մեղադրելով նրանց այն բանում, վոր նրանք նախընտրական խորհրդակցութեան են գումարել հիմանդանոցային գանձարկոյների մյուս ներկայացուցիչներին հետ:

Այդ ճշումները խիստ զրգում առաջ բերին բանվորական շրջաններում: Լիազօրները հրաժարվեցին ընտրութեաւններից և ընտրութեաւնները հետաձգվեցին:

1914 թ. մարտի 2-ին նշանակված նոր ընտրութեաւնները անցան ագիտացիայի համար աննպաստ պայմաններում: Բանվորների բոլոր ջանքերը՝ ոգտագործելու մարտի 4-ի որենքը ժողովների մասին—նպատակ ունենալով նախապատրաստվել ընտրութեաւնների համար—ինչպես և պետք էր սպասել, հանդիպեցին վարչութեան (ադմինիստրացիայի) համար ընդլիմութեան: Արգելվեցին վոչ միայն բանվորական ժողովները, վոչ միայն հիմանդանոցային գանձարկոյների բոլոր անդամների ժողովները, այլև հիմանդանոցային գանձարկոյների վարչութեաւնների ժողովները: Թույլատրված եյին միայն ընտրողների (выборщик) ժողովները, և այն էլ յուրաքանչյուր վարչութեաւնից՝ մեկին:

Չնայած բոլոր խոչնդոտներին, Ապահովագրական Թորհուրդ ընտրվեցին բոլշևիկները, վորոք ընդունել եյին բոլշևիկական կանոնադրութեաւնը լիակատար սոցիալական ապահովագրութեան մասին և բոլշևիկական բոլոր ապահովագրական լոգուսները: Մյուսպես էր բոլշևիկական ագիտացիայի և պրոպագանդի ուժը, և, չնայած արդյունաբերողների և կառավարութեան բոլոր ճշումներին, բանվորական ապահովագրական շարժումը կանգ չուռավ և բանվոր գաղաղարգը հետզհետե հասնում էր իր զատկարգային շահերի գիտակցութեանը:

Այսպիսով, մինչևիմպերիալիստական պատերազմի շրջանում բանվորներին չը հաջողվեց իրագործել իրենց պահանջները, այն է՝ համաքաղաքային և ընդհանուր շրջանային հիմանդանոցային գանձարկոյներ կազմակերպել և ձեռնարկատերերի հետապնդումը գան-

ձարկղներէց: Իշխանութիւնը դեռ գտնուում էր արդշունարե-
րողներէ ձեռքին և բանվոր դասակարգին նրանք պայմաններ
էյին թելադրում: Նման պայմաններում բանվոր-ապահովագիր-
ները (СТРАХОВИКИ) ստիպված էյին աշխատել զործարանային
տիպի հիվանդանոցային գանձարկղներում և զործագրել կառա-
վարական, իսկ հաճախ, տերերի կողմած կանոնադրութիւնը,
տերերի զործակալների նախագահութեամբ: Բհարկե, բանվոր-
ները չէյին հրաժարվում այդ աշխատանքից, նրանք պայքար
էին մղում ամբողջ գիրքերում: Յեւ չնայած, վոր այդ առորյա
ապահովագրական պայքարն այնքան սուր չէր, ինչպէս նու-
ստորդ ցույցերը, քայց դա հսկայական նշանակութիւն ուներ
այն իմաստով, վոր այդ շարժումն ընդգրկում էր բանվորական
ստիպար գանգվածներ, վորոնք միացած էին հիվանդանոցային
գանձարկղների շուրջը: Արդեն 1913 թ. սեպտեմբերին կողմա-
կերպվում էր 1,594 հիվանդանոցային գանձարկղ՝ 1,177,000 ան-
գամներով:

Այդ առորյա ապահովագրական աշխատանքը մեծ գոհու-
թիւն պահանջեց բանվոր դասակարգից: Վարչութիւնը (ադ-
մինիստրացիան) և ձեռնարկատերերը հալածանքների էին չին-
թարկում իրենց համար անհաճո բանվորներին: Շատերը՝ հետա-
վեցին դարձից, ահագին թվով բանվորներ ձերբակալվեցին և
աքսորվեցին «քիչ ու շատ հեռավոր վայրեր» և մինչև իսկ Սի-
բիր:

Ապահովագրական Խորհրդի բանվորական ապահովագրա-
կան խմբակը 1914 թ. հունիսին հայտարարութիւն ներկայաց-
րեց Ապահովագրական Խորհրդին, վորի մեջ ասված էր, վոր
բանվորական ապահովագրական շահերը պաշտպանելու համար
հարյուրավոր բանվորներ արդեն հատուցում ամէլ են յերկարասե
բանտարկութեամբ, աքսորով և յերկրից վտարվելով: Հարյուրա-
վոր բանվորներ զրկվել են մի կողմ հացից: «Կանոնադրութեան
նախադիժը քննելու համար լրագորներ ընտրելու մասին ազգով
ժանուցելը—ասված էր հայտարարութեան մեջ—կարծես թէ ազ-
գանշան և ծառայում խուզարկութիւններ և ձերբակալութիւն-
ներ կատարելու համար: Յեւ ձերբակալվում են ամենագարգա-
ցած, ինտելիգենտ բանվորները, վորոնք կարող են իրենց ըն-
կերներին բացատրել նրանց ապահովագրական իրավունքները
և ցույց տալ նրանց հարցի այնպիսի լուծում, վորը
համապատասխանում է իրենց շահերին: Գանձարկղի ընդհանուր

ժողովի և վարչութեան քննարութեանները միշտ տոկի՞ն են դառնում վարչական նորանոր խառութեանների ու հալածանքների: Արդեն լուրեր են շրջում նոր Զուքառավազի նախնի, հիվանդանոցային գանձարկւնների սպանութեամբ առաջադուր ու դիտակից բանվորներին բռնելու մասին»: Հայտարարութեան վերջում բանվորական ապահովագրական խմբակը պահանջում է դադարեցնել խառութեանները: Ի հարկե, այդ բոլոր խառութեանները հպատակի չենին հուսցնում: «Վերացվածների» տեղ պալիս էին նոր մարանչոներ, և բանվորական ապահովագրական լողունները անխոփոխ մուտք էին գործում բանվորական շրջանները:

Այդ ժամանակ ընդհանուր բանվորական շարժումը գործադուլների ձևով հետզհետե լայն չափեր էր ընդունում. 1914 թ. առաջին կիսամյակում գործադուլավորների թիվը 1,100,000 մարդ. գերազանցում էր: Ապահովագրական շարժումը քանի գնում ավելի ու ավելի էր լուծվում ընդհանուր բանվորական շարժման մեջ: Ապահովագրական լողուններն ու պահանջները հետզհետե ավելի հաճախակի էին յիշեում գործադուլային պահանջներում:

Պարզ էր, վոր բանվորական ապահովագրական պահանջների բախտը կախված էր բանվոր դասակարգի ընդհանուր պայքարից: Բանվորական շարժման ակիբը միշտ տնում էր, և 1914 թ. հուլիսին քիչ էր մնում, ապստամբութուն դառնար Պետերբուրգում: Բայց սկսված իմպերիալիստական պատերազմը ժամանակավորապես կտանցրեց բանվորական հեղափոխութեան ընթացքը: Սկսվեց տնկում բանվորական շարժման բոլոր մասերում, վորոնց թվում և ապահովագրականում:

Սակայն, յեթև ապահովագրական շարժման այդ շրջանում բանվորներին չը հաջողվեց իրագործել իրենց ապահովագրական պահանջները, ապա պետք է նկատել, վոր դրա փոխորեն կատարվեց նախապատրաստական հսկայական աշխատանք: Ճշտիվ սահմանվեց բանվորական ապահովագրական ծրագիր, և բանվորական պահանջները (կոմունիստական) դարձան բանվորական լայն մասսաների սեփականութուն:

II ԲՈՒՆԵՎԻԿՆԵՐՆ ՈՒ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՆՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Վերը նկարագրված ապահովագրական բանվորական շարժման մեջ հենց սկզբից արմատական տարբերութեան ուռալ է-

կա՞մ սոց.—դեմոկրատական կուսակցութեան հեղափոխական թեմի (բոլշեիկներ) և նրա համաձայնողական թեմի (մենշեիկ-լիկ-վիդատորներ) ԹԵՂ:

Բոլշեիկները պարզապէս ըմբռնում էին, վոր 1912 թ. ապահովագրական որենքներն իսկական սոցիալական ապահովութեան չեն սա բանվորներին: Բոլշեիկները ձգտում էին ոգտագործել այդ որենքները և նրանց միջոցով ստեղծված հիվանդանոցային գանձարկղները, լիպորները ժողովը, բանվորների ներկայացուցչութունը Ապահովագրական Խորհրդում՝ ագիտացիոն նպատակներով, նրանք ձգտում էին ապահովագրութեան մասին ճշգրիտ հասկացողութեաններ սերմանել բանվորական մասսաներում, հեղափոխական պայքարի գաղափարը պատմասե՛լ հանուն բանվորական ընդհանուր պահանջների: Բոլշեիկների համար ապահովագրական շարժումը կազմում եր ընդհանուր բանվորական շարժման մի մասը: Վերոմհետե պարզ եր, վոր վո՛չ մի ապահովագրական նվաճում հնարավոր չե առանց ուժեղ տրնտեսական և քաղաքական շարժման:

Ուստի և բոլշեիկ — ապահովագիրները (страховики) ապահովագրութեան մեջ տառջնագույն տեղը առլիս էին քաղաքականութեանը:

1913 թ. հոկտեմբերի 22-ին «За правду» թերթում կարդում ենք. — «Ապահովագրական գործի մեջ բանվորները պետք և մտցնեն իրենց բանվորական քաղաքականութեանը, ապահովագրական քաղաքականութեան մեջ յուրաքանչյուր քայլ պետք և գնահատվի բանվորների կողմից իրենց ընդհանուր քաղաքական շահերի տեսակետից: Միայն այդ պայմաններում նրանք կարող են ապահովագրական նվաճումներ անել:

Ահա այդտեղ եր առաջին արժատական տարածանութեանը մենշեիկ-լիկվիդատորների հետ: Այդ հարցում մենշեիկները յենթարկվում էին բուրժուազիայի ազդեցութեան և ասում էին, թե ապահովագրական գործը պետք և հեռու լինի քաղաքականութեանից: Դրանով մենշեիկները միայն թուլացնում էին պրոլետարիատի դասակարգային զարգացումը և ուժեղացնում բուրժուազիայի ազդեցութեանը լոնվոր դասակարգի վրա:

Այնուհետե, բոլշեիկները, ձգտելով ոգտագործել 1912 թ. ապահովագրական որենքները պրոլետարիատի դասակարգային գիտակցութեան զարգացման և նրա մասսայական կազմակերպման համար, իրենց ծրագրում տառջագրում էին մաքսիմալ ա-

ապահովագրական պահանջներ, համաքաղաքային հիվանդանոցային գանձարկներ, վորոնք կընդգրկեն ավելի մեծ թվով բանվորներ, և միաժամանակ միասնական բանվորական ապահովագրական որենք, վորը կպարունակէր իր մեջ բոլոր բանվորական ապահովագրական պահանջները:

Մենշևիկներն աշդտեղ ել բռնեցին «չափավոր» ուղղութիւն: Նրանք առաջարկում էին 1912 թ. որենքներում մասնակի «լրացումներ և փոփոխութիւններ» մտցնել:

Միանգամայն պարզ է, վոր աշդտեղ բոլշևիկներն և մենշևիկներն ճանապարհները բաժանվեցին: Սկսվեց համառ պայքար բանվոր դասակարգի վրա ազդեցութիւն ունենալու համար. պայքարը վերջացավ բոլշևիկական լուղուներն հաղթանակով՝ դեռ մենշիւսկերալիստական պատերազմի շրջանում:

Ավելորդ չի լինի, վոր կանգ առնենք այդ ուղղութիւնների գրական պայքարի վրա:

Բոլշևիկ-ապահովագիրները սկզբում չունեցին իրենց ապահովագրական թերթը: Զանազան անուններ կրող «Պրավդայում» բացված էր հատուկ «ապահովագրական բուժին», ուր ամեն որ առաջնորդող հոգվածներ էին գեանգվում բանվորների ապահովագրութեան շուրջը և լուրեր՝ ապահովագրական աչքի ընկնող անցքերի մասին:

Սակայն 1913 թ. սլարզվեց, վոր հատուկ թերթն անհրաժեշտ է: Պետական Դումայի վեց բոլշևիկ պատգամավորների նախաձեռնութեամբ հիմնվեց «Вопросы Страхования» (Ապահովագրութեան խնդիրներ) ապահովագրական թերթը, վորի առաջին համարը լույս տեսավ 1913 թ. հոկտեմբերի 26-ին:

Թվում էր, թե՛ իրենց բանվոր դասակարգի շահերի պաշտպան անվանողները պետք է վոր միայն փողջունեն Նոր ապահովագրական թերթի յերեան դալը: Բայց այդպիսի չեղավ: Մենշևիկները, վոր դեռ 1912 թ. տնեին իրենց ապահովագրական թերթը («Страхование рабочих» — բանվորների ապահովագրութիւնը), պայքար սկսեցին վեց բոլշևիկ պատգամավորների ձեռնարկելիք ապահովագրական հրատարակութեան դեմ: Ի հարկէ դա պատճառաբանվում էր ապահովագրական շարժման «միասնականութիւնը» պահպանելու անհրաժեշտութեամբ: Ինկ, եապես, բանն այն էր, վոր մենշևիկները վախենում էին, թե բոլշևիկները իրենց ապահովագրական լոզունքներով ազդեցութեան ձեռք կը բերեն բանվորական շրջաններում:

Ագիտացիա սկսվեց թերթը պաշտպանելու դեմ և անվերջ հարձակումներ՝ առանձին անձնավորությունների վրա:

Բայց այդ բոլորը իդուր էր: «Вопросы Страхования»-ն հետզհետե ժողովրդականանում էր բանվորական մասնանկրում: Գործարաններում բանվորները բանաձևեր էլին ընդունում ի պաշտպանություն «Вопросы Страхования»-ի: Կարճ ժամանակում թերթը ղեկավարող հանդիսացավ բանվորական աղանդավարական շարժման մեջ, հետ մղելով «Страхование Рабочих»-ին:

Հիշատակենք այն ընկերներին, վրոնք մասնակցություն են ունեցել «Вопросы Страхования» թերթը հիմնելու և ղեկավարելու գործում: Դրանք էլին — ընկ. ընկ. Կամարովսկիյ (Դանսկիյ), Ս. Մ. Զակա (Գլադնյով), Ֆարերկիվիչ (Գեպիչ), Դանիելով (Գուբսկիյ), Կրեատինսկին, Ստուշկա, Ասնիկ (Սկրիպնիկ) և սողերիս գրողը (Վիվ):

III. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՍՎՋԲԻՑ ՄԻՆՅԵՎ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԷԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիստական պատերազմը մեծապես թուլացրեց բանվորական շարժումը Ռուսաստանում՝ ընդհանրապես և ապահովագրական շարժումը, մասնավորապես, դեռաց ղեպի վայրկյալ: Զեռնարկությունների փակման պատճառով փակվեցին բազմաթիվ գանձարկղեր: Միայն 2 և կես ամսվա ընթացքում, այն է 1914 թ. հուլիսի 20-ից մինչև հոկտեմբերի 1-ը փակվեց 501 ձեռնարկություն՝ 47,000 բանվորներով: Արտադրությունը կրճատվեց 1,224 ձեռնարկության մեջ՝ 655,000 բանվորներով: Լիազորների 25 տոկոսը զորահավաքի յենթարկվեց: Ընդհանուր և արհեստակցական բանվորական մամուլը փոչնչացվեց: Ապահովագրական ղեկավար շրջանների մեծամասնություն «վերացմամբ» (ընկ. ընկ. Կրեատինսկու, Սկրիպնիկի, Դանիլովի և ուր.) պետք է զաղարկեր նաև «Вопросы Страхования»-ն:

Ապահովագրական շարժումն, ի հարկե, չը փոչնչացավ: Բայց նրա թափը թուլացավ, աշխատանքը տեղափոխվեց հիվանդանոցային գանձարկղները, վրոնց թիվն այդ ժամանակ 2,016 էր՝ 1,622,000 անդամներով:

Ընթացիկ, առըյա աշխատանք էր միայն կատարվում: Զբաղվում էին նորատներ տալով: Բայց պետք է ասել, վոր բանվորություն այդ ծանր ուրերին ամեն տեղ հիվանդանոցային գանձարկղներում պայքար էր տեղի ունենում՝ բանվորների վա-

դորների և արդյունաբերողների ներկայացուցիչների միջև: Բանփորներին լիազորները, տալով ամեն քանակորակ անհատական ապահովագրական պահանջներով, անհողորդ պաշտպանում էլ ինքն քանակորութեան շահերը, ձգտելով ամեն կերպ փոփոխել տերերի կանոնադրութեանը, ավելացնել նպաստները և այլն:

Ապահովագրական խորհրդի բանվորական խմբակը նույնպէս ամուր կը պահում իր ձեռքին բանվորական ապահովագրական ծրագրի դրոշը: Ձերբակալութեանների և աքսորների հետեանքով իր թվով պակաս (15 հոգուց մնացել կը 4-ը) այդ խմբակը իր ձայնը միշտ բարձրացնում կը հանուն բանվորական ապահովագրական պահանջների:

Այդ ամենը խտութեաններ կը առաջ բերում ապահովագրական շարժման ներկայացուցիչների վերաբերմամբ: Բանվորների 15 ներկայացուցիչներից (5 անգամ և 10 տեղակալ) մնացել կը 4 մարդ: Պետերբուրգի քաղաքային և նահանգական առևտրականներում 12 ներկայացուցիչ մնացել կը միայն յերկուսը: Դրութեանը լավ չէր նաև գտնուում: Նույնպիսի հալածանքների ենթանում էին թաղական բանվորների ներկայացուցիչները հիվանդանոցային գանձարկներում: Այդ բոլորի օրինակ Պետական Դռնաշրջում սոց.—գեմ. Ֆրակցիան հարցապահում արավ, իսկ ապահովագրական խմբակը խիստ բողոք արտահայտեց:

Այդ շրջանում հիվանդանոցային գանձարկների գլխավոր աշխատանքն ուղղված կը գանձարկների անգամների ընտանիքների համար հիվանդանոցներ կազմակերպելու գործին:

Չը կարողանալով ընդհանուր հիվանդանոցային գանձարկներ կազմակերպել՝ բանվորներին միացնելու համար, բանվոր-ապահովագիրները, այդ նպատակին հասնելու համար ամեն ջանք դրոշ դրին հիմնելու շրջանային բանվորական հիվանդանոցներ՝ գանձարկների անգամների ընտանիքների համար: Դործը նոր կը, առաջին անգամ կը իրականանում բանվորական բժշկականութեանը: Չնայած արդյունաբերողների և ամենագործող ծառայողների ընկերութեան» ցույց տված ընդդիմութեան, բանվորները հասան իրենց նպատակին: 1915—1916 թ. թ. ընթացքում Պետրոգրադում և այլ վայրերում կազմակերպվեցին բանվորական հիվանդանոցներ:

Ստեղծվել այդ հիվանդանոցների մասին, չի կարելի կանգ չառնել պրոպեգանդա Չերնոմարովի վրա: Դեռ 1914 թ. հունվարին, հեռացված լինելով «Правда»-ի խմբագրութեանից, նա կոչ-



կատի գանազանը հարկերով լիցանալուց հետո, նորից յերեաց Պետերբուրգի հորիզոնի վրա: Չերնոմազովը սկզբում մտավ Լեոնեբրի գործարանին կից յեղած հիվանդանոցային գանձարկը և այնանկ սկսեց իր սրովակատորական աշխատանքը: Տիրելով Վերորգի շրջանի բանվորների վստահությունը, նա փորձեց մշտնել Պուտիլովյան գործարանի հիվանդանոցային գանձարկը և միաժամանակ՝ «Вопросы Страхования» - խմբագրության մեջ: Սակայն այդ ժամանակ արդեն տեղեկություններ կային նրա անձնավորության կասկածելիության մասին և Կ. Կ. բյուրոյի վորոշմամբ նա գործից հեռացվեց:



Չրկվելով հետագայում լրտեսի աշխատանք կատարելու հընարավորությունից, Չերնոմազովը մասնեց ապահովագրական շարժման և «Вопросы Страхования»-ի բոլոր իրեն հայտնի ղեկավարներին: Տեղի ունեցավ «Вопросы Страхования»-ի խմբագրության ձերբակալությունը (ընկ. Պաղվոյսկու և տողերիս գրողի): Չերեակալվեցին նաև ապահովագրական շարժման ղեկավարները (ընկ. Ռսիպովը և այլն): Փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ միանգամայն պառզվեց նրա սրովակատորական գործունեության բնույթը, Չերնոմազովը, բոլշևիկներին Կ. Կ. ճնշմամբ ձերբակալվեց և բանտարկվեց Կրեմլում, վորտեղ և մեռավ:

„Вопросы Страхования“-ի վերահրատարակությունը ըսկավեց 1915 թ. փետրվարի 20-ից: Վերահրատարակության նախաձեռնությունը պատկանում էր բանվորական ապահովագրական խմբակին: Այն քումը, վոր առաջ էր յեկել սլտաերագմը հոյտարարելուց հետո, հետգհետե անցավ և ապահովագրական շարժումն սկսեց քիչ կենդանություն առնել: Անհրաժեշտ էր ղեկավարել ապահովագրական աշխատանքը թե տեղերում և թե կենտրոնում:

Այս անգամ էլ մենշևիկ-լիկվիդատորները փորձեք արին խափանելու բոլշևիկական ինքնուրույն թերթը՝ զանազան նշանաբաններով, ինչպես՝ «միաժամանակյա ապահովագրական շարժում», «բոլոր Ֆրակցիաների միաժամանակյա Ֆրոնտ» և այլն: Բայց այդ էլ չուղնեց:

Բոլշևիկ-բանվորները լմբռնում էին իրենց որդանի անհրաժեշտությունը՝ մասնավորապես այն ժամանակվա քաղաքական պայմաններում, և «Вопросы Страхования»-ն նորից սկսեց լույս տեսնել:

Այդ ցերեկ, ի շարիկ, մեծ ջանքեր էր պահանջում: Ապահո-



վաղրական զործիչներից շատերը «հեռու» էին (ընկ. ընկ. Կրեւ-տինսկին, Միլիտանիկը, Դանիլովը), փոխանք էլ ուրիշ բնագա-վառներում էին աշխատում։ Այդ շրջանում, թերթի հրատարա-կության և զեկալարության մեջ գործոն մասնակցություն ունեին հանդուցյալ Թարերկեկիչը, Պաղվոյսկին, Արսկին, Յերեմիևը և տողերիս գրողը։ Թերթի կեսը լցվում էր ընդհանուր և քաղաքա-կան բնույթի կրող հոգվածներով։ Այգաեղ էին գետեղվում նաև ընկ. Ջինովկեվի հոգվածները։ Դա միակ դրական որդանն էր, վոր բողեիկական ուղղություն ունեւր, և նրա զերն այդ ժամանակ մեծ էր։ Վորքան հնարավոր էր այն ժամանակվա պայմաններում, թերթը լուսարանում էր իր հջերում ժամանակակից հրատապ ինդիքները իմպերալիզմի, սոցիալ-շովինիզմի, սոցիալ-դավաճա-նության, Յիմմերվայլի կոնֆերանսի և այլնի մասին։

Սովորաբար համարները լույս էին տեսնում սպիտակ տեղե-րով։ Հաճախ ամբողջ հոգվածի փոխարեն սպիտակ թերթ էր լույս տեսնում։ Բայց և այն, ինչ վոր սե էր լինում սպիտակի վրա, առողջարար սնունդ էր ծառայում բանվորների համար։ Թերթը լույս տեսավ 1915 թ. փետրվարի 20-ից մինչև 1916 թ. նոյեմ-բերի 13-ը, ամիսը մեկ անգամ և փակվեց խմբագրության մեծ մասի ձերբակալությամբ՝ Չերնոմազովի մատնելով։

Վորպեպի պարզ լինի, թե ինչ լեզվով էր խոսում այդ ծանր օրերին բանվորական ապահովագրական խմբակը, մեջ բերենք քաղվածներ «բանվորների ապահովագրության գործը վաղուց խոր-հրդում բանվորական ապահովագրական խմբակի արած հայտա-րարություն»-ից, վոր տպված էր «Вопросы Страхования»-ում 1916 թ. ապրիլի 25-ին։

«Յերկու տարի էլ չի ունցել Ապահովագրական Խորհրդի բնարությունից հետո, իսկ բանվորական ապահովագրական խմ-բակի 15 անգամից մնացել և 4 հոգի։ Բայց պրոլետարիատի կամքը անդադրելի է։ Նա զարձյալ խորհուրդ ուղարկեց բանվո-րական ապահովագրական ծրագրի հեռնողական պաշտպաններին»։

Այնուհետև հայտարարության մեջ հիշատակվում է բանվո-րական ապահովագրական ծրագիրը սոցիալական լիակատար ա-պահովագրության մասին և մատնանշվում են բանվոր դասա-կարգի ապահովագրական հերթական սրահանջները՝ հիվանդանո-ցային գանձարկիների բանվորական կանոնադրություն, համա-քաղաքային հիվանդանոցային գանձարկներ, ձեռնարկատերերի հեռացումը՝ հիվանդանոցային գանձարկներից, բանվորական

խմբակի մշակած կանոնները բժշկական ոգնութեան մասին, վորը պետք է հանձնվիր հիվանդանոցային զանձարկողների ձեռքը: Այնուհետև հայտարարութեան մեջ ասված է, վոր Ապահովագրական խորհուրդը չի կատարել հանձնառած պարտավորութեաները, Խորհրդի և առյանների աշխատանքը գաղտնի է տարվում բանվորական մասսաներից, վոր ապահովագրական կամպանիայի, ժողովների և համագումարի ազատութեան չկա և վերջանում է համառուտական ապահովագրական համագումար հրավիրելու պահանջով:

Հասկանալի է, վոր այդպիսի հայտարարութեաններն ու հողվածները մեծ ազդեցութեան ելին զործում բանվորութեան վրա, հանդիսանալով այդ խավար որերին լուսավոր ճառագայթներ և անմար պահելով բանվորական լոգուններին որբազան կրակը:

IV ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵԿ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԿԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ՇՐՋԱՆԸ

Փետրվարյան հեղափոխութեանից անմիջապես հետո բողշելի—ապահովագիրները ուժեղ կամպանիա սկսեցին բանվորական ապահովագրական պահանջներն իրագործելու համար: Արդեն 1917 թ. մարտի 25—26-ին կայացավ Պետրոգրադի առաջին համաքաղաքային կոնֆերանսը, ուր ներկա ելին բանվորութեան ներկայացուցիչները—անկախ այն բանից թե, յեթա՞նք ևն նրանք սոցիալական ապահովագրութեան, թե վոչ—մեկական՝ յուրաքանչյուր 2,000 բանվորից: Այսպիսով, կոնֆերանսը ներկայացնում էր բանվորական լայն զանգվածներ:

Բոլշևիկներն այդ կոնֆերանսում հաղթող դուրս յեկան:

Ընդունված էին բոլոր բոլշևիկական ապահովագրական լոգուններն ու պահանջները:

Կոնֆերանսը փորձում կայացրեց հեռեկալ գեկրեաների հրատարակման անհրաժեշտութեան մասին. հիվանդանոցային զանձարկողների իրավունքի մասին՝ իրենց ձեռքը վերցնելու բժշկական ոգնութեան և կազմակերպելու համաքաղաքային և ընդհանուր շրջանային զանձարկողներ, հիվանդանոցային զանձարկողներից ձեռնարկատերերին խալառ հեռացնելու մասին, բոլոր ապահովագրական տուրքերը ձեռնարկատերերի վրա դնելու մասին, ապահովագրական ընկերութեանների վերակազմութեան մասին—

ըստ վորում՝ բանվորական ներկայացուցչութիւն պէտք է հաստատուի, — ապահովագրական խորհրդի և առյանների վերակազմութեան մասին՝ բանվորական մեծամասնութիւն կազմող ներկայացուցչութեան հիմունքներով: Վերջին յերկու պահանջները բանվորական լիակատար լուղուններ չեն, այլ ժամանակավորապէս առաջադրվում են, վորպէս հերթական պահանջներ:

Մենշևիկները, վոր առաջ պնդում են, թե իրենք ծրագրաւոր տարաձայնութիւններ չունեն բոլշևիկների հետ, այժմ, իշխանութեան դուրս կանգնելով և կապիտալիստների ու կալվածատերերի հետ զործակցելով, ցույց տվին իրենց իսկական դիմքը: Զը կարողանալով ձեռք բերել առաջագիծ՝ բանվորների վրատահութիւնը, նրանք, բանվորական, գինւորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների համագումարում սարքովի ապահովագրական խորհրդակցութիւն կայացրին: Այդ խորհրդակցութեանը նրանք չը հրավիրեցին բոլշևիկ ապահովագիրների ներկայացուցիչներին և համաձայնողական բանաձեւեր անցկացրին: Այդ բանաձեւերում նրանք լուծւում են տուրքերը ձեռնարկատերերի վրա դնելու մասին, տեխնիքապէս անհնարին են համարում սոցիալական ապահովագրութիւնը տարածելու բոլոր բանվորների վրա և մշուշապատ խոտերով ծրագրում են Ապահովագրական Խորհրդի և առյանների «ռամկավարացումը»:

Բայց այդ բանաձեւերն իշխանական խորհրդից գնը չէին անցնելու: Հինց նույն ժամանակ կազեա—մենշևիկական մինիստրական գրասենյակներում 1912 թ. որենքի համար ուղղումներ են նախագծվում, ուղղումներ, վորոնք ամենաանհշտն փոփոխութիւններն են մտցնելու յեղած որենքի մեջ:

Մենշևիկ-ապահովագիր Շվարցի ղեկավարութեամբ՝ աշխատանքի մինիստրութեան հրատարակած 1917 թ. հուլիս 25-ի որենքը միայն անհշտն չափով ավելացրեց արդյունաբերական ապահովագրչալ բանվորների թիվը, ապահովագրութիւնից դուրս թողնելով փոխադրողներին, գյուղատնտեսական բանվորներին, ծառաներին, զործակատարներին և այլն: Այդ որենքով տուրքերի կէսն ընկավ բանվորների վրա և ձեռնարկատերերի ներկայացուցիչները մնացին պանծարկողների վերատուգիչ հանձնաժողովներում: Ապահովագրական Խորհրդում և առյաններում յերկու կողմերն ունեյին հավասար թիվով ներկայացուցիչներ:

Համաձայնութիւնը բուրժուապիայի հետ՝ ունեցավ իր տրամաբանական հետեանքները:

Բանվորական մասսաները շուտով հատկացան մենշևիկական առաջնորդների խաբեբայությունը: Իշխանության գլուխ կանգնելուց հետո, մենշևիկներն խալտո կորցնում են իրենց աղգեցությունը բանվորների վրա:

Հուլիսյան և Կոռնիլովյան որերը միանգամայն սխալից-րին բանվորներին համաձայնականությունից: Արդեն Պետրոգրադի 2-րդ համաքաղաքային կոնֆերանսը, վոր տեղի ունեցավ ոգոստոսի 21—23-ին, անցավ բանվորա-գյուղացիական իշխանություն պահանջելու նշանակի տակ՝ սոցիալական լիակատար ապահովագրության լոգունգների իրագործման համար: Ընթացիկ մոմենտի շուրջը ընդունված բանաձևը վերջանում էր այսպես. «Բանվորների շահերին համաձայնատախանող սոցիալական ապահովագրությունը հնարավոր է միայն նոր հեղափոխական վերելքի դեպքում, յերբ վերջնականապես կը տապալվի հակահեղափոխական բուրժուազիայի իշխանութունը և սլոլիտարիատն ու չքավոր գյուղացիությունը կվերցնեն իշխանությունն իրենց ձեռքը»:

Նույնանման հայտարարություն արավ բանվորական ապահովագրական խմբակը Պետրոգրադի «գեմեկրատական խորհրդակցությանը»:

Այդ հայտարարության մեջ բանվորական ապահովագրական խմբակն ասում էր. «միայն հեղափոխական բանվորների, գյուղացիների և զինվորների իշխանությունը կարող է լուծել գյուղացիական և բանվորական հարցերը, ինչպես նաև հիվանդների, անաշխատունակների ու հաշմանդամների սոցիալական ապահովության հարցը, և իրագործել բանվորական ապահովագրական ծրագիրը»:

Ապահովագրական շարժումն իր բազուր կապից բանվոր-գյուղացիական հեղափոխության հետ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո իշխանությունն անցավ բանվորների և գյուղացիների ձեռքը և հնարավոր չեղավ իրագործելու բանվորական պահանջները սոցիալական լիակատար ապահովագրության մասին:



-50-

**Ս ԳԵՐԿՈՎԱՇԺԹՈՂԿՈՒՄԱՅԻ ՀԱՊԱՏՈՒՆԻ ԼԻԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՈՒՄԵՆ
ՍՈՑԻԱԼԿԱՆ ԱԿՈՇՈՎԱԳՐՈՒՄԵՆ ԲԱԺՆԻ ԽՐԱՏԱՐԱՆԿՈՒՄԵՆ**

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- 1. Ռ. Գ. ԴՈՆԱԿԻՅ—** Խորհրդային Սոցիալական Ապահովագրությունը.
- 2. Ս. ՎԻՏԿՈՒՐՈՎ—** Բանվորական Ապահովագրական Շարժումը.

ՊԱՏՐԱՍՏԿՈՒՄ Ե ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝

- 1. Զ. ՏԵՏԵՐՅԱՆ—** Բանվորների ապահովագրությունը, վորպես դասակարգային պայքարի արդյունք.

Լույս տեսած հրատարակությունները վաճառվում են Սոցիալական Ապահովագրության Բաժնում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0835599

Ա 143

ԱԳՀ

177

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

Թույլատրված է Գ. Ք. Լ. Վ.